«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

Սովորողների քննադատական մտածողության զարգացումը «Ռուսաց լեզու» առարկայի ուսուցման գործընթացում:

Առարկան՝ *Ռուսաց լեզու*

Հետազոտող ուսուցիչ՝ *Նորա Ասկարյան*

Ուսումնական հաստատություն՝ *Արարատի մարզի Արգավանդի միջնակարգ դպրոց*

Երևան 2023

ԹԵՄԱ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ «ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ……... 3

ԳԼՈՒԽ 1. «ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ» ԱՌԱՐԿԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՄԵՐ ՓՈՐՁԸ …… 8

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆ …….15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ……. 23

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ……. 23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆվ …… 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի մանկավարժական որոնումները նպատակ ունեն ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները, որ նրանց պասիվ ունկնդրողի դերը փոփոխվի ակտիվ մասնակցի դերով: Դրա շնորհիվ սովորողները դառնում են առավել անկաշկանդ ու ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում են ուսման դրական դրդապատճառներ, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ:

Հասարակական կյանքի անբաժանելի մաս հանդիսացող կրթությունը բոլոր դարաշրջաններում ուղղված է եղել հասարակության պահանջների բավարարմանը: Կրթության նպատակը մանկավարժության մեջ միշտ եղել է անփոփոխ՝ աճող սերնդին նախապատրաստել կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք, ակտիվ անդամներ, իսկ կրթության խնդիրներն անընդհատ փոփոխվել են՝ պայմանավորված նոր հասարակական պահանջների ձևավորմամբ, տվյալ հասարակության տնտեսական, գիտական, մշակութային զարգացմամբ:

Սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Ճանաչողությունը մարդկային մտածողության մեջ իրականության արտացոլման ու վերարտադրման գործընթաց է, որն ապահովում է ճշմարտության իմացում, գիտելիքների ձեռք բերում, յուրացում, ցանկացած կատարած աշխատանքում ստեղծագործական մոտեցում:

Վերը նշված կարևորագույն խնդիրների լուծման նպատակով ժամանակակից մանկավարժության մեջ կիրառվում են բազմաթիվ մանկավարժական տեխնոլոգիաներ: Ուսուցման գործընթացի կատարելագործմանը, սովորողների ակտիվացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը մեծապես նպաստում է մանկավարժական տեխնոլոգիաների շարքում իր ուրույն տեղն ունեցող քննադատական մտածողության տեխնոլոգիան:

Քննադատական մտածողության ձևավորման ու զարգացման հիմնախնդիրները դիտարկել են 20-րդ դարի վերջերին ԱՄՆ-ի հոգեբան-մանկավարժներ Ջ.Լ.Սթիլը, Ք.Ս.Մերեդիթը, Չ.Թեմփլը, ինչպես նաև Բ.Բլումը, Ղ.Քլուսթերը և ուրիշներ: Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման խնդիրներին ու արդյունավետությանը ավելի ուշ անդրադարձել են ժամանակակից մանկավարժներ Գ.Սելեվկոն, Ի.Զագաշևը, Ս.Զաիր-Բեկը, Ի.Մուշտավինսկայան, Մ.Կլարինը, Վ.Կուկուշինը, Վ.Միժերիկովը և այլք:

Քննադատական մտածողության տեխնոլոգիան, լինելով ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիա, ունի բավականին հին արմատներ: Այն միավորել ու իր մեջ է ամփոփել մի շարք մանկավարժական տեխնոլոգիաների /պրոբլեմային ուսուցման, կոլեկտիվ ուսուցման, խաղային ուսուցման տեխնոլոգիաների/ արդյունավետ, արդիական ու նշանակալի կողմերը՝ դառնալով առավել ընդգրկուն ու ժամանակի պահանջներին համահունչ:

Հետազոտության շրջանակներում քննադատական մտածողության տեխնոլոգիան ուսումնասիրվել է սովորողների ճանաչողական կարողությունների զարգացման տեսանկյունից՝ ապահովելով նպաստավոր մանկավարժական պայմաններ սովորողների բնականոն զարգացման համար:

Հանրակրթական դպրոցում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը կրում է որոշակի փոփոխություններ, շատ մեթոդներ վերափոխվում

են՝ համապատասխանեցվելով սովորողների տարիքային ու անհատական առանձնահատկություններին:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հանրակրթական դպրոցում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունների բացահայտումն ու հիմնավորումն է' որպես սովորողների ճանաչողական կարողությունների զարգացմանը նպաստող մանկավարժական տեխնոլոգիա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ

Ռուսաց լեզու առարկայի ուսուցման գործընթացն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Սովորողների ճանաչողական կարողությունների զարգացմանը նպաստող քննադատական մտածողության տեխնոլոգիան է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝

■ Դիտարկել սովորողների ճանաչողական կարողությունների զարգացման դերն ու անհրաժեշտությունը դպրոցում:

■ Ուսումնասիրել քննադատական մտածողության տեխնոլոգիայի գիտատեսական, մեթոդաբանական հիմքերը և հիմնավորել տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունները սովորողների ճանաչողական կարողությունների զարգացման գործում:

■ Հիմնավորել քննադատական մտածողության տեխնոլոգիան՝ որպես ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա, որը նպաստում է սովորողների ճանաչողական կարողությունների զարգացմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել մանկավարժության ավանդական և նորարարական մոտեցումներն ու տեսությունները /Յ.Կոմենսկի, Կ.Բաբանսկի, Ն.Կովալյով, Ա.Բարանով, Մ.Ակատկին, Ի.Պոդլասի, Պ.Պիդկասիստի, Մ.Կլարին և այլք/, դպրոցական տարիքի վերաբերյալ մանկավարժական և հոգեբանական գաղափարներն ու մոտեցումները /Ա.Պետրովսկի, Վ.Կրուտեցկի, ԼՎիգոտսկի և այլք/:

Հետազոտության հիմքում դրված են ճանաչողության վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական գաղափարներն ու մոտեցումները /Մ.Ռոզենտալ, Ի.Ֆրոլով, Վ.Ռատնիկով, Վ.Կանկե, Ն.Տալիզինա,Գ.Շչուկինա, Ա.Կաիրով, Վ.Կուզնեցով, Վ.Ալլասստյոնին և այլք/, ինչպես նաև ճանաչողական կարողությունների ձևավորման ու զարգացման վերաբերյալ տեսությունները /ԼՎիգոտսկի, Բ.Բլում, ժ,Պիաժե, Լ.Զանկով, Ղելկոնին, Վ.Դավիդով/:

Հետազոտության համար հիմք են հանդիսացել քննադատական մտածողության ձևավորման ու զարգացման վերաբերյալ մի շարք մանկավարժների մոտեցումներն ու ուսումնասիրությունները /Ջ.Սթիլ, Ք.Մերեդիթ, Չ.Թեմփլ, Ի.Զագաշև, Ս.Զաիր-Բեկ, Ի.Մուշտավինսկայա, Գ.Սելեվկո, և այլք/:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հետազոտության խնդիրները լուծելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու ընթացքում կիրառվել են հետևյալ գիտահետազոտական մեթոդները.

■ վերլուծվել և ընդհանրացվել են մանկավարժական առաջավոր փորձի վերաբերյալ աշխատությունները,

■ կիրառվել են հետազոտությունների արդյունքների վերլուծման նորարարական մեթորներ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:

■ Քննադատական մտածողության տեխնոլոգիան դիտարկվել է որպես սովորողների ճանաչողական կարողությունների զարգացմանն ուղղված արդյունավետ մանկավարժական տեխնոլոգիա:

■ Քննադատական մտածողության տեխնոլոգիան ներկայացվել է որպես դպրոցում կիրառելի ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա:

■ Սահմանվել են մանկավարժական այն պայմանները, որոնք արդյունավետ են դարձնում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը հանրակրթական դպրոցում:

Տեսական վերլուծության է ենթարկվել քննադատական մտածողության տեխնոլոգիան՝ որպես ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա, որը նպաստում է սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

ԳԼՈՒԽ 1. «ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ» ԱՌԱՐԿԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՄԵՐ ՓՈՐՁԸ

Քննադատական մտածողության տեխնոլոգիանվերջին շրջանում ինքնուրույն զարգացում է ապրել և այսօր դարձել է մանկավարժական առաջատար տեխնոլոգիաներից մեկը:

Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիայի ակունքներում է ընկած հույն դասական փիլիսոփա Սոկրատեսի առաջարկած ուսուցման <<էվրիստիկ>> կամ <<սոկրատեսյան>> հարցադրումների մեթոդը: Փիլիսոփայական տեսանկյունից քննադատական մտածողությունը դիտարկվում է որպես տրամաբանական, ռեֆլեքսիվ, ստեղծագործական մտածողության յուրահատուկ ձև: Քննադատական մտածողության զարգացման հարցերը տրամաբանորեն կապված են անձի ստեղծագործական գործունեության, ինքնիրացման, ինքնուրույնության հետ: Քննադատական մտածողությունը բնութագրվում է որպես ճանաչողական գործընթաց, որը վերաբերում է փորձի արդյունքում ստացված տեղեկատվության վերլուծությանը, համադրմանն ու գնահատմանը դիտումների, խորհրդածությունների կամ հաղորդակցման միջոցով: Այլ կերպ ասած՝ քննադատական մտածողությունը ռեֆլեքսիվ մտածողություն է, որը զարգացնում է տեղեկատվությունը մշակելու, գնահատելու և ստեղծագործաբար կիրառելու կարողությունը: Քննադատական մտածողությունը նպաստում է ըստ իրավիճակների գործունեության ձևեր ու եղանակներ ընտրելուն, հիմնավորված որոշումներ ընդունելուն, հիմնախնդիրներ բացահայտելուն, վարկածներ առաջադրելուն, այլընտրանքային տեսակետներ ընդունելուն կամ հիմնավորված մերժելուն, գնահատողական վերաբերմունք ձևավորելուն: Նշված հատկանիշները պահանջում

են ճանաչողական բարձր կարողությունների ձևավորվածություն, քանի որ նմանօրինակ գործընթացների համար անհրաժեշտ է խնդրի համակողմանի ուսումնասիրություն հուսալի տեղեկատվության և դրա նկատմամբ վերլուծական-գնահատողական վերաբերմունքի հիման վրա: Անձի քննադատական մտածողության ձևավորումը կախված է նրա ընդունակություններից, հետաքրքրություններից, կարևոր են նաև ուսումնական նյութի բովանդակությունն ու կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաները: Ուսումնական թեմաների արդիականությունը, պրոբլեմային բնույթը, ուսումնաճանաչողական գործընթացի սուբյեկտների ինքնուրույնությունն ու հաղորդակցման վրա հիմնված փոխգործակցությունը, տեղեկատվական-կրթական միջավայրը, գիտական գիտելիքները, վերլուծական կարողությունները նպաստում են քննադատական մտածողության զարգացմանը: Քննադատական մտածողությունը դրսևորվում է խոսքային գործունեության բոլոր ձևերում:

Քննադատական մտածողության զարգացմանը նպաստում են ուսումնական նյութերում արտահայտված մտքերի և դիրքորոշումների գնահատումը, բազմատեսանկյուն դիտարկումը, սեփական մտքերի հետ համեմատումը, համադրումը, եզրահանգումների ձևակերպումը:

Քննադատական մտածողության զարգացման սկզբունքներն են տեղեկատվության գիտականության, արժանահավատության, մատչելիության ապահովումը, ուսումնասիրվող նյութերի սոցիալ-մշակութային բովանդակությունը, ուսումնաճանաչողական գործընթացի հաղորդակցական բնույթը, քննադատական մտածողության և ճանաչողական ակտիվության զարգացման ձևերի ու միջոցների կիրառումը: Քննադատական մտածողության էությունն այն է, որ ուսուցիչը պատրաստի գիտելիք հաղորդողից վերածվի սովորողի ուսումնական աշխատանք կազմակերպողի: Աշակերտը ինքնուրույն որոնողական աշխատանքի արդյունքում ինքն է ձեռք բերում անհրաժեշտ գիտելիքներ: Քննադատական մտածողությունը

ճանաչողության ինտերակտիվ գործընթաց է: Այն ընդհանրական մոտեցում է, որը օգնում է սովորողներին գնահատել գաղափարների արժեքը կամ արդյունքները՝ նախքան որոշումներ կայացնելը կամ տեսակետ ձևավորելը:

Շատ կարևոր է կարողանալ ստացած տեղեկատվությունը տեսակավորել, համակարգել և որոշել դրա կարևորությունն ու տեղը գիտելիքների համակարգում: Աշակերտները պետք է կարողանան որոշել, թե զանազան տեղեկությունները ինչպես են առնչվում միմյանց հետ: Նրանք պետք է կարողանան առանձնացնել նոր գաղափարը համատեքստում, գտնեն անծանոթ հասկացության իմաստը և մերժեն այն տեղեկատվությունը, որը չի առնչվում համատեքստին կամ ճիշտ չէ: Աշակերտները պետք է դառնան քննադատաբար մտածող և սովորող մարդիկ, սակայն դրան հասնելու համար աշակերտներին անհրաժեշտ է ուսուցչի օգնությունը: Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիայով անցկացվող դասի մոդելը նկարագրվում է որպես ճանաչողական գործընթաց, ուր սովորողները ներգրավվում են և՛ նախքան նոր նյութի մատուցումը /խթանում/ , և՛ նյութի մատուցման ընթացքում /իմաստավորում/ և՛ նյութը մատուցելուց հետո /կշռադատում/ /ըստ ԽԻԿ համակարգի/ :

Այսպիսով՝ կարելի է ասել, որ՝

1. Գիտելիքը /տեղեկատվությունը/ ոչ թե քննադատական մտածողության արդյունքն է այլ նրա խթանը կամ առաջին քայլը:

2. Քննադատական մտածողությունը սկսվում է հարցադրումներից և լուծվելիք հիմնախնդրի պարզաբանումից:

3. Քննադատական մտածողությունը պարտադիր կերպով պետք է տանի դեպի համոզիչ փաստարկների ձևավորում:

4. Քննադատական մտածողությունն ունի հասարակական ուղղվածություն:

Քննադատական մտածողությունը զարգացնում է՝

- սովորողների՝ խմբերում աշխատելու կարողությունը,
- միջառարկայան և ներառարկայական կապերի ձևավորման կարողությունները /տեղեկատվության վերլուծություն և համադրություն/,
- գիտելիքները ստեղծագործաբար իմաստավորելու, տեղեկատվության՝ ըստ նոր և կարևոր լինելու ասատիճանի համակարգելու կարողությունը,
- հավասար պայմաններում համագործակցելու, միևնույն ժամանակ ղեկավարելու և դրա համար անհրաժեշտ կարողություններ և հմտությունները,
- տարբեր կարողություններ ունեցող մարդկանց հարգելու կարողությունները,
- սեփական նախաձեռնություն ցուցաբերելու կարողությունները,
- սեփական սկզբունքները պահպանելու կարողությունները:

Սովորողների քննադատական մտածողության ձևավորումն այսօր ժամանակի պահանջ և՛ բարդ և՛ բազմակողմանի երևույթ է: Խոսել աշակերտների քննադատական մտածողության զարգացման մասին, նշանակում է խոսել նրանց մտածողության որակի բարելավման, որոշակի մտավոր ունակությունների, հմտությունների կատարելագործման, ինչպես ուսումնական գործունեության, այնպես էլ առօրյայում այդ հմտություններից օգտվելու ունակության մասին: Դպրոցական տարիքը տրամաբանական և քննադատական մտածողության զարգացման գործում արդյունավետ ժամանակաշրջան է: Երբ երեխան մտնում է դպրոց, ուսուցման ազդեցության տակ, սկսվում է նրա բոլոր ճանաչողական և քննադատական գործընթացների վերակառուցումը:

Սովորողի քննադատությունը կենտրոնացած է օբյեկտի մասին գիտելիքների վրա, ինքնին ճանաչելի ամփոփմանը, գիտելիքների ձեռքբերման մեթոդներին, որպես կրթության գործունեության առարկայի: Եվ ժամանակակից չափանիշներով այդ ուղղությունը ստանում է առանձնահատուկ իմաստ, քանի որ կրթության մեջ

կատարվում են նորովի փորձանմուշներ՝ ինչպես մանկավարժների, այնպես էլ սովորողների գործառույթներն ու ուսուցման ընթացքում նրանց փոխգործակցության գործընթացները: Քննադատական մտածողությունը գիտելիք ձեռք բերելու միջոց է, վերլուծելու, գնահատելու, տեղեկացված դատողություններ անելու, ուսումնասիրվող
խնդրի վերաբերյալ սեփական կարծիքը մշակելու և գիտելիքը կիրառելու կարողություն՝ ինչպես ստանդարտ, այնպես էլ ոչ ստանդարտ իրավիճակներում: Սովորողները պետք է սովորեն, իսկ ուսուցիչը աջակցի նրանց ՝ կասկածի տակ դնելով տեղեկատվության հավաստիությունը, ստուգի ապացույցների տրամաբանությունը և եզրակացություններ և դատողություններ անի: Ժամանակակից պայմաններում սովորողների քննադատական մտածողության զարգացման գործընթացում անհրաժեշտ է.

- սովորողներին սովորեցնել առանձնացնել ծանոթ երևույթների պատճառահետևանքային կապերը,
- մշակել նոր գաղափարներն ու գիտելիքները արդեն գոյություն ունեցողների համեմատելու կարողություն,
- ձևավորել անհարկի կամ սխալ տեղեկույթը մերժելու ունակություն,
- զարգացնել այն դիրքորոշումը, որը միշտ կարելի է և պետք է ստուգել:

Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիայի հիմնական սկզբունքներն են՝

- ուսումնական գործընթացում սովորողների ակտիվությունը ու ապահովում,
- խմբային աշխատանքի կազմակերպում,
- հաղորդակցման հմտությունների զարգացում
- սովորողների բոլոր գաղափարների ընկալում որպես հավասարապես արժեքավոր մտքեր,

- ուսումնական նյութի յուրացման միջոցով սովորողների ինքնակրթության դրդապատճառայնության ապահովում
- ուսումնական գործընթացի բովանդակության փոխկապակցում կյանքի խնդիրների հետ,
- դիտարկվող նյութերի գրաֆիկական տեխնիկայի օգտագործումը

Տարբերակվում են քննադատական մտածողության զարգացման երեք փուլեր.

Մարտահրավեր	**Բովանդակության իմաստավորումը**	**Ռեֆլեքսիա**
Մոտիվացիոն (նոր տեղեկատվության հետ աշխատելու մոտիվացիա, թեմայի նկատմամբ հետաքրքրության արթնացում)	Տեղեկատվական (նոր տեղեկատվության ստացում):	Հաղորդակցական (նոր տեղեկատվության վերաբերյալ կարծիքների

Մարտահրավերի փուլը նախատեսված է նոր տեղեկույթ ստանալու համար: Այս փուլում սովորողը դառնում է ավելի ակտիվ, դիմում է անձնական փորձին, հետաքրքրություն է ցուցաբերում թեմայի նկատմամբ: Ուսուցիչն աջակցում է, որ այս թեմայի վերաբերյալ արդեն իսկ առկա գիտելիքները սովորողներն ակտիվացնեն և ծառայեցնեն քննադատական մտածողության ձևավորմանը:

Այսպիսի հարցերի միջոցով սովորողները հիշում են, թե ինչ գիտեն ուսումնասիրվող թեմայի մասին, տալիս են հարցեր, ձեռք են բերում նոր տեղեկույթ: Այս նպատակով օգտագործվում են տարբեր մեթոդներ՝ ուղեղային գրոհներ, ուսումնասիրվող նյութի շուրջ տարբերակների մշակում**:**

Բովանդակության իմաստավորման փուլում կատարվում է ուղղորդված, բովանդակալից աշխատանք տեքստի շուրջ: Ուսուցիչը հետաքրքրված է ուսումնասիրվող թեմայով, սովորողներին առաջնորդում է աշխատելու նոր տեղեկույթ շուրջ՝ սովորողներին ուղղորդելով «հին» գիտելիքներից դեպի «նորը»:

Սովորողները կարդում են տեքստը և ընկալում են նոր տեղեկատվությունը նշումներ անում լուսանցքներում:

Ռեֆլեքսիայի անդրադարձի փուլը դասի ժամանակ ուսումնասիրվող տեղեկույթը դարձնում է իր սեփականը: Այս փուլում կարևորն այն է, որ ուսումնասիրված տեղեկույթի հիման վրա ստեղծագործական, հետազոտական և գործնական առաջադրանքներ:

Այստեղ գլխավորն է ձեռք բերված տեղեկատվության ամբողջական ըմբռնումը, ընդհանրացումը, նոր գիտելիքների յուրացումը, առարկայական դաշտի շարունակությունը, սովորողներից յուրաքանչյուրի կողմից ուսումնասիրվող նյութի շուրջ անձնական փաթեթի ստեղծումը: Այս ճանապարհով աշակերտը իմաստավորում է իր սովորած նյութը և ձևավորում սեփական աշխարհայացքը:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Մեր ուսումնասիրությունների համար տեսական հիմքն են կազմում մի շարք հեղինակների աշխատություններ: Դրանցից է՝ Ի.Օ Զագաշևի, Ի.Վ. Մուշտավինսկայայի «Учим детей мыслить критически» ձեռնարկները, որոնք առաջարկում են մեթոդներ, որոնք ուղղված են ժամանակակից աշխարհում կյանքի համար անհրաժեշտ մտավոր ունակությունների զարգացմանը. տեղեկատվությանը քննադատաբար վերաբերվելու, ինքնուրույն որոշումներ կայացնելու և եզրակացություններ անելու աշակերտների ունակությունների ձևավորմանը:

Մենք ներկայացրել ենք 2 դասերի նախապատրաստման գործընթացում և հենց դասի ընթացքում կիրառվող տեխնիկաներ, որոնք արդյունավետ են սովորողների քննադատական մտածողության ձևավորման գործընթացում:

«ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

Այս տեխնիկան կիրառվում է ուսումնական նյութի նկատմամբ սովորողների մեջ հետաքրքրություն առաջացնելու և ակտիվ ընթերցանության մեջ ներգրավելու նպատակով: Նոր ուսումնական նյութը կարդալուց առաջ ուսուցիչը գրատախտակին դուրս է գրում 3-4 հիմնական արտահայտություն և հրավիրում սովորողներին մտածել ու հանդես գալ որպես «խուզարկու»:

Այնուհետև գրատախտակի վրա ուսուցիչը նկարում է «**Գիտեմ/ Ուզում եմ իմանալ/ Ինչ սովորեցի»** տրամագիրը

Ի՞նչ ենք մտածում, ի՞նչ գիտեինք	Ի՞նչ ենք ուզում իմանալ	Ի՞նչ սովորեցինք

Սովորողներին առաջարկվում է մտածել զույգերով: Նրանք կիսում են իրենց մտքերը, ուսուցիչը դրանք նշում է առաջին սյունակում: Երկրորդ սյունակում ուսուցիչը գրում է այն հարցերը, որոնք առաջանում են քննարկման ընթացքում: Այնուհետև սկսվում է թեմայի բովանդակության բացահայտման անմիջական աշխատանքը:Դասի վերջում լրացվում է երրորդ սյունակը:

«ՄՏԱԳՐՈՒՀ»

Սա ուսումնական նյութի տրամագրով ցուցադրելու միջոց է: Մտագրոհը փաստորեն մտածողության ոչ գծային ձևի արտացոլումն է:

- ✓ Դատարկ թերթիկի (գրատախտակի) մեջտեղում գրվում է ստեղծագործության հիմնաբառ կամ նախադասություն, որը ներկայացնում է գաղափար: Շուրջը գրվում են բառեր կամ նախադասություններ, որոնք արտահայտում են տվյալ թեմայի համար հարմար մտքեր, փաստեր, պատկերներ:
- ✓ Ներկայացված բառերը կապվում են ուղիղ գծերով՝ առանցքային հասկացությանը:



Այս աշխատանքի ընթացքում սովորողները ձեռք են բերում ուսումնասիրած նյութը համակարգելու, դասակարգելու, եզրահանգումներ ձևակերպելու, նոր գիտելիքները ինքնուրույն ձեռք բերելու կարողություններ:

Աղյուսակում լրացրած նյութերի քննարկման գործընթացքում սովորողները ոչ միայն ներկայացնում են ուսումնական նյութից իրենց ձեռք բերած գիտելիքները, այլև դիտակում են դրանք իրենց տեսանկյունից, հաստատում են կամ մերժում բացահայտած տեղեկույթը, հիմնավորում են իրենց մոտեցումները՝ կապելով կյանքից ձեռք բերած փաստերին:

«ՀԻՆԳ ՐՈՊԵԱՆՈՑ ՇԱՐԱԴՐԱՆՔ»

Մեթոդական հնարն իրականացվում է դասի վերջում՝ կշռադատման փուլում, օգնելու սովորողներին ավելի գիտականորեն հասկանալ իրենց մտքերը ուսումնասիրված թեմայի վերաբերյալ:

Սա ուսուցիչներին տալիս է հնարավորություն՝ հասկանալու, թե ինչ է տեղի ունենում դասարանում: Այս շարադրանքը սովորողների առջև դնում է երկու խնդիր՝

ա) գրել մեկ նախադասություն, այն մասին, թե նրանք ինչ են սովորել այդ թեմայից,

բ) գրել մի հարց, որը նրանց մոտ անպատասխան մնաց:

Ուսուցիչը հավաքում է այս գրությունները, և կարող է դրանք օգտագործել հաջորդ դասը պլանավորելիս:

Աշխատանքի ընթացքը՝

Դասի թեման՝ **« Наши традиции »**

Նպատակները և խնդիրները՝

1. Ընդլայնել սովորողների պատկերացումները այն երկրի մասին,որտեղ ապրում են,նրա ազգային նյութական և ոչ նյթական արժեքների մասին:

2. Զարգացնել հմտություններ գտնել անհրաժեշտ տեղեկություն թեմայի շուրջ:

3. Վարել կարճ երկխոսություն «Наши традиции» թեմայով:

4. Ձևավորել հոգատար վերաբերմունք սեփական ազգային արժեքների հանդեպ

5. **Ձևավորել վարքականոնի պահպանման կարևորության գիտակցություն**

ԸՆԹԱՑՔԸ

Մարտահրավերի փուլ

1.Ներկայացնել դասի առջև դրված հիմնական խնդիրները:

2. Որտեղի՞ց կարելի է իմանալ դրանց մասին:

Իմաստավորման փուլ

1. - Как вы думаете, чем отличается один народ от другого?
2. - Что такое традиция?

***Традиции** – это привычки, обычаи, правила, которые люди передают из поколения в поколение.*

3. - Что значит быть гостеприимным? Это традиция?
4. - Какие армянские традиции вам известны?

1. **Работа с текстом.**

Чтение учителем текста об армянских традициях. Беседа по тексту.

1) Что автор текста называет духовным богатством?

2) Как вы понимаете выражение «многовековые традиции»?

3) Что такое армянское гостеприимство?

4) Как отмечают армяне праздники?

5) Что рассказывается в тексте о празднике Трндез?

6) Чему посвящён праздник Цахказард?

7) Какой праздник отмечают армяне летом?

Чтение информации об Армении и ее традициях (используется приём «инсерт»).

я это знал	новое для меня	я думал иначе	хотелось бы узнать больше
V	+	-	?

2. **Учащиеся в группах должны заполнить таблицу: записать «толстые» и «тонкие» вопросы.**

Тонкие вопросы (лёгкие)	Толстые вопросы
Где армяне отмечают праздники?	*Зачем во время Трндеза люди прыгают через костёр?*
Когда бывает Трндез?	*Как вы думаете, почему армяне любят отмечать праздники дома?*
…	…

3. **Работа с картинками.**

Ученики рассматривают картинки, подбирают названия и рассказывают о тех традициях, которые изображены на картинках.

- «Традиции в армянской семье»
- «Армянские традиции на свадьбах»
- «Традиционная еда»
- «Гостеприимство»
- «Традиционная одежда»
- «Традиционные танцы»

4. **Создание кластера.**

После заполнения кластера ученики рассказывают о традициях Армении, используя информацию из кластера.



<u>Դասի ավարտը</u>

Սովորողներին հանձնարարել տանը պատրաստել և պաստառի վրա ներկայացնել մի նախագիծ՝ նշելով՝ նախ այն հիմնախնդիրը, որը առավել մտահոգիչ է անձամբ ի՛ր համար և բացահայտել, թե ինչու՞ հենց դա: Քննարկել թե ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկել այդ խնդրի լուծման նպատակով:

Այսպիսով, դասի արդյունքում սովորողները սովորում են հրատապ խնդիրների շուրջ կազմակերպել իրենց աշխատանքը և ցանկալի արդյունքի հասնել, միմյանց և ուսուցչի հետ համագործակցության ճանապարհով ձեռք են բերում ինքնատիրապետման, ինքնագնահատման, ինքնակատարելագործման կարողություններ:

Այս աշխատանքի ընթացքում կիրառված հարց-պատասխանի փուլում գերազանց ակտիվություն դրսևորեց դասարանի 40 %-ը: «Կլաստերի» մեթոդի կիրառումը հնարավորություն տվեց, որ յուրաքանչյուր աշակերտ հրցին նայի սեփական դիտակետից: Իրենց կողմից առանձնացված խնդիրներից շատերը չէին կրկնվում և հիմնված էին անձնական կարծիքի վրա: Խմբային աշխատանքի 3

խմբերում ընդգրկված էին հինգական աշակերտ, որոնցից համապատասխանաբար 2-ը կանխարգելման ծրագրի քննարկման ընթացքում պասիվ էին:

15 հոգանոց դասարանի ակտիվությունը դասի սկզբին հետևյալն էր՝



Հաջորդ դասին ամփոփվեց կատարված աշխատանքը: Կիրառված մեթոդը քննադատական մտածողության զարգացման և հիմնախնդիրների վերհանման միջոցով օգնեց, որ դասարանի մեծամասնությունը դրսևորի ակտիվություն և ինքնուրույն խոսք կառուցելով՝ ներկայացնի իր նախագծի միջոցով:

Հաշվի առնելով դասի ավարտը և արդյունքները՝ սովորողների ակտիվությունը բարձրացավ՝ պայմանավորված տնային աշխատանքի կատարմամբ: Այս հանձնարարարությունը սովորողներին հնարավորություն տվեց ինքնուրույն ուսումնասիրություն անցկացնել հարցի վերաբերյա:



Աշակերտների գնահատումը

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սովորողների քննադատական մտածողության զարգացմանը միտված աշխատանքի արդյունավետության համար անհրաժեշտ է դասարանում ստեղծել այնպիսի մանկավարժական, բարոյա-հոգեբանական պայմաններ, որոնք կնպաստեն, կօգնեն ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելուն՝ առաջնորդվելով իրենց փորձով, այն մոտեցնելով ճանաչողության գործընթացին:
2. Քննադատական մտածողության զարգացմանն ուղղված մեթոդների իրականացումը հնարավորություն կընձեռի սովորողների աշխատանքը կազմակերպել զույգերով կամ խմբերով:
3. Հաշվի առնելով նշված մեթոդների արդյունավետությունը՝ կարծում ենք զույգերով և փոքր խմբերով աշխատանքը կկրկնապատկի սովորողների մտավոր ներուժը, զգալիորեն կընդյալնի նրանց բառապաշարը, կզարգացնի հարգանք սեփական մտքերի և փորձի նկատմամբ:

Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիան հնարավորություն է տալիս դասարանում արված բացահայտումները և դիտարկումները սովորողների համար դարձնել սովորություն, որը կնպաստի նրանց ուսումնական դրդապատճառների կրթական մոտիվացիայի բարձրացմանը:

ԱՌԱՁԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Սովորողների քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը ժամանակակից դպրոցում համապատասխանեցվի և հարմարեցվի դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկություններին:
- ճանաչողական կարողությունները բացահայտվեն հիմնական և ավագ դպրոցում՝ քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման արդյունավետությանը նպաստող հիմնական պայմաններում,

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հարությունյան Գ.Ն., «Ուսուցման արդի նպատակների իրականացումը «Քննադատական մտածողության զարգացման» մեթոդների միջոցով», «Մխիթար Գոշ», /Գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ/3[7], 2005թ.
2. Հարությունյան Գ.Ն., «Քննադատական մտածողության տեխնոլոգիայի մեթոդներն ուղղված արդի մանկավարժական խնդիրների լուծմանը», «Մանկավարժություն», /Գիտամեթոդական վերլուծական ամսագիր/, N6, 2011թ.
3. Հարությունյան Գ.Ն., «Քննադատական մտածողության տեխնոլոգիան ուղղված մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացմանը», «Մանկավարժություն», /Գիտամեթոդական վերլուծական ամսագիր/, N6, 2012թ.,
4. Асачева, М. В. Технология развития критического мышления на уроках русского языка и литературы // Молодой ученый. — 2019. — № 48 (286).
5. Бустром Р. Развитие творческого и критического мышления. М.: "Открытое общество", 2006.
6. Дьюи Д. Психология и педагогика мышления. — М., 1999.
7. Кабанова - Меллер Е.Н. Формирование приёмов умственной деятельности умственного развития учащихся. - М.: Просвещение, 1968..
8. Павлова, А. И. О технологии развития критического мышления учащихся на уроках русского языка // Русский язык в школе. — 2007. — № 8.
9. Халперн Д. Психология критического мышления (Текст)/Халперн Д.; пер. с англ. Н.Мальгина и др. — 4-е международ.изд. — СПб.: Питер, 2000.
10. http://www.velib.com/shcool_ru_1.html
11. http://solncesvet.ru/razvitie-kriticheskodo-myishleniya-na-ur
12. http://pmss.m-sk.ru/index.php